կոթողների պատկերաքանդակները ու զարդաքանդակները հայ արուեստի մի նոր աշխարհ են բաց անում մեր առաջ, ցոյց տալով, թէ գեղարուեստական ի՞նչ հասանքներ են եղել Դ.–Զ. դարերում, քրիստոնէութեան պետական կրօն դառնալու ժամանակ եւ յետոյ Հայաստանում: Բայց անցնինք նրանց

Բ.

Սկսենք Օձունից, ոչ այն պատճառով, որ այդ կոթողը ամենահինն ենք համարում, այլ որ տաճարի առանձնայատկութիւնները օգնում են նաեւ յուշարձանի ժամանակի ո-

Պատկ. 37

ծանօթութեան եւ ուսումնասիրութեան, որ կատարում ենք ոչ ըստ ժամանակագրութեան, որովհետեւ այդ անկարելի է, այլ ըստ տեղերի, ամեն անգամ մատնանշելով յուշարձանի առանձնայատուկ կողմը, ընդհանուր եզրակացութիւնը թողնելով վերջում:

ռչման: Նախընթաց մասի Զ.–Ը. դլուխների մէջ կատարած քննութիւններով ջրուած ենք համարում այն բաւական տարածուած առասպելը, թէ Օձունի տաճարը շինուած է Յոհան Օձնեցու կողմից ութերորդ դարի առաջին կիսում, իսկ կողքի յուշարձանը Սմբատ Ա.